ԷԼԼԱ ԱՎԱԳՅԱՆ

ԿԱՖԿԱՅԱԿԱՆ ՈԳԻՆ ՈՐՊԵՍ ԿԱՐԵՎՈՐ ԳՈՐԾՈՆ ՄԱՐԻԱՆՆԵ ԳՐՈՒԲԵՐԻ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

Մեծ անունները, ստեղծագործությունները, դարերի ընթացքում վերածում են որոշակի խորհրդանշերի, իսկ դրանցից շատերը՝ ընդհուպ մինչև գրական առասպելների: Նմանատիպ առասպել է դարձել 20-րդ դարի մշակույթում Ֆրանց Կաֆկան, որի գործունեությունը վաղուց դարձել է համաշխարհային արվեստի գործոն: Ֆրանց Կաֆկայի ստեղծագործությունները թարգմանվել են տարբեր լեզուներով և տարածվել ողջ աշխարհում՝ իրենց մեկնաբանությունները գտնելով նաև կինոյում, թատրոնում, ժողովրդական բանահյուսությունում: Ֆրանց Կաֆկայի ստեղծագործությունները սակայն ոչ միայն թարգմանվեցին այլ լեզուներով, այլև ենթարկվեին յուրահատուկ «թարգմանության» գերմանացի, ավստրիացի և շվեյցարիացի հեղինակների կողմից: Այստեղ խոսքը իհարկե չի գնում օտարալեզու ծածկագրի մասին: Սա տվյալ հեղինակի ստեղծագործության թարգմանությունն է մի այլ հեղինակի լեզվով՝ տեղափոխելով մտածողության մի մոդելը մեկ այլ մոդելի վրա:

Ժամանակակից ավստրիացի գրող Մարիաննե Գրուբերի ստեղծագործությունները հանդիսանում են վերը ասվածի լավագույն ապացույցներից մեկը, քանի որ ակնհայտ է Գրուբերի մի քանի տեքստերի տիպաբանական մոտիկությունը Կաֆկայինին: Մարիաննե Գրուբերը սկսել է ծավալել գրական գործունեություն 70-ական թվականներից հետո, երբ նրա սերնդի շատ ներկայացուցիչներ տարված էին էքզիստենցիալիզմի գաղափարներով: Գրուբերը իր գրական ուսուցիչների շարքին է դասում ժան-Պոլ Սարտրին և Ալբեր Կամյուին, Իվան Տուրգենևին և Ֆեոդոր Դոստոևսկուն: Ռուս և ֆրանսիացի մտածողների գաղափարները օգնել են գրողին փնտրել ու գտնել էության ամենաբարդ հարցերի պատասխանները: Այս մտածողները հիմք են ծառայել ձևավորելու Գրուբերի աշխարհայացքը աստծո հանդեպ: Կաֆկա ֆենոմենը Գրուբերի համար նույնպես կապված է աստծո որոնման հետ: Դոստոևսկու կրոնականության և Կամյուի աթեիզմի մեջ Գրուբերը

առանձնահատուկ է ընկալում Կաֆկայի աստծուն: Այս իմաստով Ֆրանց Կաֆկան Մարիաննե Գրուբերի համար դարձել է այսպես կոչված մի «միջնականգառ», մի կամուրջ աստծո բացարձակ մոտիկության և էության բացարձակ աբսուրդության միջև: Հատկանշական է, որ Գրուբերը իր վեպի վերնագիր է ընտրել հենց «միջնականգառ» - «Zwischenstation» անվանումը, որտեղ բավականին ակնհայտորեն է երևում նրա կապը Կաֆկայի հետ՝ բյուրոկրատական երկու համակարգերի նկարագրում, որտեղ մարդը կորցրել է սեփական նկարագիրը և դարձել անօրինանությունների զոհ: «Անանուն բյուրոկրատական լաբիրինթոս-ապարատի նկարագրումը Կաֆկայից սկսած ծառայում է էության խնդիրներին առնչվող բոլոր թակարդների ու կախաղանների վերհանմանն ու բացահայտմանը»: Վեպի սյուժեն ծավալվում է «միջնականգառ» խորհրդանշի շուրջը: Մարի Սավարին, վեպի գլխավոր հերոսուհին , այլևս չդիմանալով հարավում տիրող կեղեքիչ իշխանությունների բռնություններին ու անօրինություններին, փախչում է ամուսնու, երեխաների և ընկերների հետ մի քաղաք, որտեղ ղեկավարում են նմանատիպ իշխանավորները: Հայտնվելով «կանգառների միջև», քանի որ ամուսինը՝ Ռոլանդը, պայքարում էր իշխանությունների դեմ՝ ապստամբական բանակում, իսկ ինքը երեխաների հետ մնացել էր քաղաքում ՝ փորձելով ելք գտնել այդ փակուղուց, գլխավոր հերոսուհին հայտնվում է երկընտրանի իրավիճակում, որտեղ անհնարին է տարբերել ճշմարտությունը կեղծիքից: Նա հայտնվում է իշխանությունների ցանցի մեջ, մի լրտեսական ցանց, որը սարդոստայնի նման տարածված է ողջ քաղաքով մեկ, այսպես ինչպես Կաֆկայի մոտ գրասենյակների ցանցը, որը ձգվում է սովորական տների ու շենքերի տանիքներին՝ կապված լինելով միմյանց հետ մութ միջանցքներով: Մարին, ինչպես և Յոզեֆ Կ. –ն, ընկնելով այս սարդոստայնի մեջ, դառնում է ուժի և հետապնդումների զոհ: Անհրաժեշտ է նկատել նաև, որ Մարիաննե Գրուբերի հերոսները, ինչպես և Ֆրանց Կաֆկայինը, ի սկզբանե եղել են ապանձնավորված, նա նույնպես անվանել է իր հերոսներին տառերով, սակայն հետագայում, հրաժարվելով այդ մտքից, տվել է նրանց անուններ՝ վերցնելով դրանք տարբեր ազգերից, որպեսզի շեշտի իր վեպի սյուժեի բացարձակությունը և ապազգայնությունը:

Ժանրային հարցերում Գրուբերի ստեղծագործություններում նույնպես ակհայտ է Կաֆկայական շունչը: Այստեղ հերոսները նույնպես գտնվում են այսպես կոչված «դեռ ոչ արթուն» «Noch-nicht-Wach-Sein» և «դեռ չքնած» «Nicht-Mehr-Schlafen» վիճակներում: Սա թերևս կարևոր շփման եզր է նրանց ստեղծագործությունների համար: Նմանություններ ակնհայտ են նաև մոտիվի ու թեմայի ընտրության հարցում: Վախի թեման բնորոշ օրինակ է, սակայն հետաքրքրաշարժ են պատկերների ու կերպարների նմանությունները: Ընդգծելի են զուգահեռականները, որոնք գոյություն ունեն «պաշտոնյաների» կերպարների միջև դատարանը - «das Gericht», դղյակը - «das Schloss» Կաֆկայի մոտ, իշխանությունները - «das Amt» Գրուբերի մոտ: Այս երկուսն էլ «աստվածացված» են և ներկայացնում են ուժ և բարձրագույն էություն: Նրանք սփռում են վախ և տնօրինում մարդկանց ճակատագրերը խաղալով գրեթե կրոնական դեր: Այսպես, հեռախոսի զանգի հնչելը նման է եկեղեցու զանգերի ղողանջին, իսկ շենքերը հիշեցնում են տաճարներ: Բարձրաստիճան պաշտոնյաների գործողությունները երկու հեղինակների վեպերում էլ անտրամաբանական են, «օրենքը» նրանց մոտ նշանակում է անօրինություն, իսկ մարդը «ճահճացած է և գործում է մեքենայորեն», սակայն, եթե Կաֆկայի տոտալիտարիզմը կրում է զուտ առասպելական բնույթ, ապա Գրուբերի «Միջնականգառ» վեպում այն ունի սոցիալ-քաղաքական շարժառիթ: Կաֆկայի հերոսները բարձրաստիճան պաշտոնյաներ են, մինչդեռ Գրուբերի հերոսը հասարակ ժողովուրդն է: Առաջ քաշելով այնպիսի համամարդկային ու հրատապ խնդիրներ , ինչպիսիք են մարդու տեղի և դերի որոնումը կյանքում, ծառացած կենցաղային ու առօրեական խնդիրների լուծումը, որոնք ունեն սոցիալական արմատներ, հեղինակը զարգացնում է դրանք ընդհուպ մինչև համամարդկայինի: Գրուբերը հանդես է գալիս ուտոպիզմի դիրքերից, արտահայտվելով գիտաֆանտաստիկ «science fiction - SF» ոճով, սակայն քննադատները այդ «SF» հապավումը իրավացիորեն մեկնաբանում են որպես սոցիալական «social-fiction», քանի որ գործողությունների ու իրադարձությունների կիզակետում կանգնած է մարդը իր սոցիալական խնդիրներով: Գրուբերը անցյալի և ապագայի օգնությամբ փորձում է ձևակերպել ներկան, այսօրը, երբեք չկորցնելով ժամանակի թելը: «Գրուբերի վեպը յուրօրինակ

անժամանակյա է, ինչպես իր նախորդներինը՝ Կաֆկայինը, Կազաքսինը կամ Կամյուինը»: Նա գրում է ոչ թե մարդկանց մասին, այլ մարդկանց համար, նա չի փորձում տալ դեղատոմսեր, ինչպես ապրել, այլ դրդում է մարդուն մտածելու, նրան հույս է հաղորդում:

Մարիաննե Գրուբերի ստեղծագործություններում առանցքային է հույսի ֆենոմենը, որով էլ այն հեղինակի աշխարհը տարբերում է Կաֆկայի աշխարհից: Վերջինիս աշխարհը հերմետիկորեն փակ է, մարդը գտնվում է լաբիրինթոսում, մեկուսացված մի շրջանում, որտեղ հազիվ թե բացվեն ազատության դռները, իսկ հերոսների մահը ի չիք է դարձնում հույսի պատրանքը, որը մի պահ կարող էր առկայծել հեռվում, կյանքի ու մահվան սահմանագծին: Գրուբերի հերոսուհու մահը խորհրդանշում է ազատություն՝ փորձելով հաղթահարել մարդկային միայնությունը: Գրուբերի հերոսները ընդունակ են բողոքելու, դիմադրելու և պայքարելու՝ չհաշտվելով պարտության հետ, չխեղաթյուրելով բարոյական կերպարը, չկորցնելով վերջին աղոտ հույսը: Ինչպես հեղինակն է գրում. «Առանց հույսի մենք պոտենցիալ մարդասպաններ ենք, հույսը դա մի այնպիսի խելագար բան է, սակայն մարդ չի կարող կորցնել այն»: Այսպիսով, չնայած գաղափարական և կառուցվածքային որոշ տարբերությունների, Մարիաննե Գրուբերի ստեղծագործություններում առկա է Կաֆկայական ոգին: Նա, շարունակելով այն կուռ ավանդույթները, որոնք սահմանվել էին դեռևս 20-րդ դարի դարասկզբի մտածողների կողմից, իր ստեղծագործություններով փորձ է անում նորովի իմաստավորել մարդու կյանքը և մեկնաբանություններ տալ մարդկային էության վերաբերյալ ծառացած խնդիրներին՝ համապատասխան դարավերջի պահանջներին՝ դառնալով խորհրդանիշ ապագա սերունդների համար: